



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 37ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱԲ

**ՄՈՒՇԵՂ ՄՐԲԱԶԱՆ. «ՄՐՏԲԱՅ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԽԱԿԱՆ՝
ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ»**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 37րդ նստաշրջանը տեղի ունեցաւ Ուրբաթ, 15 եւ Շաբաթ, 16 Մայիս 2009ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Ներկայ էին Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաժակ Տիքիճեան եւ Վահէ Եագուպեան, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներ, ազգային երեսփոխաններուն մեծամասնութիւնը, ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետներ, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամներ եւ վարժարաններու ու մասնկամուրներու տնօրէններ ու վարիչներ: Ժողովին հիւրընկալն էր Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը:

ԲԱՅՈՒՄ

Հաւաքական աղօթքով նիստի բացումէն ետք, Առաջնորդ Սրբազանը նախ ողջոյնի խօսք ուղղեց ժողովին մասնակիցներուն ու հիւրերուն, ապա հրաւիրեց Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեանը, որպէսզի ընթերցէ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ ժողովիս ուղղուած օրհնութեան խօսքը: Վեհափառ Հայրապետը կ'ողջունէր ժողովին մասնակիցները, կը նշէր, որ գոհունակութեամբ կը հետեւի Թեմիս աշխատանքային կեանքին եւ կը շեշտէր, որ այդ աշխատանքները կը բազմապատկուին ու նոր ծաւալ կը ստանան, ինչ որ կը հարկադրէ ճիգերու լարում եւ հաւատքի զօրացում, անսակարկ ու ամբողջական նուիրում: Ան համոզում կը յայտնէր, որ այս աշխատանքները նոյն նուիրումով պիտի շարունակուին, մասնագիտական կարողականութեամբ օժտուած անձերու ներգրաւումով: Ան նաեւ յոյս կը յայտնէր որ Երիտասարդութեան Տարուան առիթով, երիտասարդներ ներգրաւուին մեր հաւաքական կեանքին մէջ, վայելելով գործող երեց

սերունդներուն քաջալերանքը: Վերջապես, Վեհափառ Հայրապետը գնահատանք կը յայտնէր Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան՝ իրենց նուիրեալ ծառայութեանց համար:

Այնուհետեւ, ժողովը անցաւ իր օրակարգի լուծման: Առժամեայ դիւանի ատենապետ ու ատենադպիր ընտրուեցան, յաջորդաբար՝ Տեարք Հայկազ Թրթռեան եւ Ճէք Հաճիսեան: Ողջոյնի ու սրտի խօսք արտասանելու հրաւիրուեցաւ Ազգ. Կեդր. Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան. ան ողջունեց ներկաները, ու յատկապէս Ազգ. Կեդր. Վարչութեան նորընտիր անդամ Տիար Վահէ Եագուպեանը, վեր առաւ Ազգ. Երեսփոխանական ժողովին դերը՝ Վեհափառ Հայրապետին կողմէ հռչակուած Երիտասարդական Տարին կենսաւորելու, ինչպէս նաեւ մեր նորահաս սերունդներուն հայեցի դաստիարակութեան կոչուած՝ մեր դպրոցներուն հոգատարութեան մէջ:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան ու հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աւետիս Քիւնյ. Թորոսեան: Ապա, իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը:

Ողջունելով ներկայ ժողովականներն ու հրաւիրեալները, ան առաջին հերթին երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, որ իր պատգամներով ու թելադրանքներով ուղեցոյց կը հանդիսանայ Թեմիս աշխատանքներուն: Ան յիշեցուց, որ անցեալ տարի, Վեհափառին պատգամին ընդառաջելով, յատուկ ճիգ դրուեցաւ քրիստոնեական դաստիարակութեան կալուածին մէջ, իսկ այս տարի, հրաւիրուած ենք յատուկ հոգածութիւն տրամադրելու նորահաս սերունդներուն՝ երիտասարդութեան: Առաջնորդ Սրբազանը նշեց, որ այս իմաստով արդէն ուշագրաւ քայլեր առնուած են, ունինք երիտասարդ հոգաբարձուներ ու գործողներ, կազմուած է երիտասարդական երգչախումբ, որ մօտ ատենէն պիտի ունենայ իր առաջին ելոյթը, ու տակաւին, յառաջիկայ փուլին, յաւելեալ աշխատանք ու հոգածութիւն պիտի տրամադրուին երիտասարդութեան, յատկապէս նորակազմ ընտանիքներուն ու աշակերտութեան:

Առաջնորդ Սրբազանը, արձանագրուած իրագործումներէն՝ յիշատակեց Թեմիս 35ամեակի տօնակատարութիւնը, որ առիթ եղաւ լուսարձակի տակ բերելու Կաթողիկոսութեան ու Թեմիս առաքելութիւնը: Ան ողջունեց նաեւ Նորթ Հոլիվուտի ծխական նորակազմ համայնքի ներկայացուցիչը, մաղթելով, որ բոլոր նորակազմ շրջանները իրականացնեն սեփական եկեղեցի ունենալու երազը:

Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի հոգեմտաւոր ու մշակութային կեդրոնի մը հանգամանքին, նշելով, որ այս յարկին տակ տեղի կ'ունենան երիտասարդական եւ այլ համագումարներ, մշակութային ձեռնարկներ:

Իր խօսքը եզրափակելով, Առաջնորդ Սրբազանը ժողովականները հրաւիրեց անսահանջ նուիրումով ու վերանորոգ կամքով շարունակելու եկեղեցանուէր ու ազգանուէր աշխատանքը, ապաւինելով Աստուծոյ, »որ դատարկածեռն չի թողուր իրեն վստահողը«:

Մայրուն դիւանի անդամ ընտրուեցան Տեարք Նազարեթ Ծատուրեան եւ Զամօ Գասպարեան (Ա. եւ Բ. ատենապետ), Զրայր Ճերմակեան եւ Լեւոն Արապեան (Ա. եւ Բ. ատենադպիր): Իսկ բանաձեւի յանձնախումբի անդամ ընտրուեցան Տեարք Զայկազ Թրթռեան, Ժռա Մանուչարեան եւ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՒ ԳՆԱՅԱՏՈՒՄ

Ազգ. Երեսփոխանական Ժողովի օրակարգի ուշագրաւ կետերէն մէկն է ծխական շրջաններու մասին գեկուցումները. այս ծիրին մէջ, հոգաբարձութեանց ատենապետներ կամ ներկայացուցիչներ հակիրճ ծանօթութիւններ տուին իւրաքանչիւր շրջանի կարեւոր իրագործումներուն, շինարարական աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին, ապա նաեւ փորձառութիւններ ու տեսակետներ փոխանակեցին ընդհանուրը շահագրգռող կալուածներու մասին:

Այս տարի, Օրակարգի վրայ էր տեղեկատուական գեկուցում մը՝ Ազգային Սահմանադրութեան կառոցին ու ոգիին մասին: Չեկուցաբերն էր Ս. Նահատակաց եկեղեցւոյ երեսփոխաններէն՝ Տիար Զայկազ Թրթռեան:

Յաջորդական նիստերուն, ժողովը լսեց Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի հակիրճ գեկուցումները, այն աշխատանքներուն մասին, որոնք իրականացած էին երեսփոխաններուն շաբաթներ առաջ տրամադրուած գրաւոր տեղեկագիրներէն ետք: Ժողովը մանրամասնօրէն ու հանգամանօրէն քննարկեց տարուած աշխատանքին նիւթական ու բարոյական երեսները, պահանջեց ու ստացաւ յաւելեալ լուսաբանութիւններ, ու այս բոլորին իբրեւ արդիւնք, «յոյժ գովելի» գտաւ Առաջնորդ Սրբազանին, զոյգ ժողովներուն ու անոնց հովանիին տակ գործող մարմիններուն ու յանձնախումբերուն աշխատանքին արդիւնքը:

Այնուհետեւ, ժողովը արձանագրեց Զոգեւորականաց Զամագումարին, ապա նաեւ ծխական շրջաններու եւ ներկայ երեսփոխաններուն այն առաջարկներն ու տեսակետները, որոնց հիմամբ կ'ուրուագծուին աշխատանքի յառաջիկայ դաշտերուն ուրուագիծերը եւ անոնց գործադրութիւնը կը վստահուի գործադիր իշխանութիւններուն՝ Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան: Ծրագրումին մէջ, ինչպէս սպասելի էր, կարեւոր տեղ ունեցան մեր վարժարանները, երիտասարդութիւնը եւ հայ ընտանիքները, մասնաւորաբար նորակազմ հայ օճախները: Կարեւորութեամբ վեր առնուեցաւ երիտասարդ սերունդը ազգային կեանքին մասնակից դարձնելու եւ զանոնք պատասխանատուութեան կոչելու հրամայականը: Ժողովը նաեւ նկատի առաւ շարք մը միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են ծխականներու հետ եկեղեցւոյ գործակցութեան բարելաւման ու մեր հաւաքական կեանքին նոր որակ ներարկելու, ինչպէս նաեւ մեր եկեղեցիներուն ու դպրոցներուն միջեւ գործակցութիւնը աւելի եւս սերտացնելու համար: Այս ծիրին մէջ, գործադիր իշխանութիւններուն վստահուեցաւ նաեւ առաւելագոյն թիւով հայ աշակերտներու հայեցի կրթութիւն տրամադրելու նիւթական ու բարոյական միջոցներու որոնումը:

ՄԵՐ ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

Ազգային Երեսփոխանական Ժողովը կանգ առաւ նաեւ հայութեան պահանջատիրութեան առջեւ եւ արձանագրեց, որ անհրաժեշտ է շրջահայեաց ըլլալ մեր անժամանցելի իրաւունքներուն հետապնդման գծով, ետ չմնալ յանձնառու կեցուածքէ եւ ձայնակցիլ պետական պատասխանատուներու ուղղուած արդար ու անսակարկելի պահանջներուն:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Ժողովը իր աւարտին հասաւ Շաբաթ, 16 Մայիսի յետմիջօրէին:

Առաջնորդ Սրբազանը, նստաշրջանի փակման իր խօսքին մէջ, գնահատանք արձանագրեց ժողովականներու աչալուրջ աշխատանքներուն համար: Ան անգամ մը եւս շեշտեց սրտբաց գործակցութեան հրամայականը, բաւարարութիւն յայտնեց, որ այս ժողովը ընթացած է սրտցաւ արտայայտութիւններով, եւ ընդգծեց, որ «գրաւոր որոշումներ ու քուէարկութիւններ այնքան արդիւնաբեր չեն ըլլար, որքան սրտի քուէները, որոնք կը հարստացնեն մեր գործի անդաստանները»: Ան մաղթեց, որ Կրօնական Ժողովն ու Ազգ. Վարչութիւնը նոյն թափով ու յանձնառութեամբ շարունակեն յառաջիկայ տարուան աշխատանքները:

Որոշուեցաւ, որ Ազգ. Երեսփոխանական Ժողովը յառաջիկայ տարի տեղի ունենայ Ֆրեզնոյի մէջ, Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ յարկին տակ:

Ժողովը փակուեցաւ Առաջնորդ Սրբազանին Պահպանիչով ու «Կիլիկիա»ի եւ «Մեր Հայրենիք» ի խմբերգումով:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Նշենք նաեւ, որ Ազգային Երեսփոխանական Ժողովը այս տարի եւս հաւատարիմ մնաց վերջին տարիներու իր աւանդութեան, ըստ որուն, այս ժողովի ընթացքին, յատուկ պատիւի կ'արժանանայ մեր Թեմին ու հասարակական կեանքին մէջ անսակարկ ու նուիրեալ ծառայութիւն մատուցող ազգային մը:

Այս տարի, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութիւնը գնահատանքի արժանի գտած էին մեր եկեղեցւոյ անսակարկ նուիրեալներէն՝ Զօհրապ Սարկաւազ Եարալեանը:

Պարգեւատրումի արարողութիւնը տեղի ունեցաւ Բ. նիստի սկզբնաւորութեան, Ուրբաթ երեկոյ: Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Զօհրապ Սարկաւազի ծառայական կեանքին, նշելով, որ ան եղած է Անթիլիասի Ժառանգաւորացի սաներէն ու տասնամեակներ շարունակ մեր եկեղեցիներուն մէջ սպասարկած է իբրեւ սարկաւազ, հոգաբարձու, եղած է Ֆերահեան վարժարանի ուսուցիչ, ապա նաեւ՝ Թեմիս մէջ կազմուած Դպրեվանքի Սանուց Միութեան բազմամեայ ատենապետը. ստուար է լուսարձակներէ հեռու անոր տարած աշխատանքին վաստակը:

Ապա, Առաջնորդ Սրբազանը, Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան ատենապետներուն հետ միասին, յուշանուէր մը յանձնեց Չօհրապ Սարկաւազին, որ իր կարգին արտայայտեց շնորհակալութեան իր զգացումները, ողջունեց բոլոր կամաւոր ծառայողները, անդրադարձաւ մեր եկեղեցւոյ հետ իր տասնամեակներու կապին եւ վերահաստատեց իր նուիրաբերումը նոյն կամքով շարունակելու պատրաստակամութիւնը: Ներկայ էր Չօհրապ Սարկաւազի ազնիւ Տիկինը՝ Քարմէնը, որ նմանապէս նուիրեալ աշխատանք կը տանի Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին անդամակցութեան եւ այլ միջոցներով:

37TH PRELACY REPRESENTATIVES ASSEMBLY CONCLUDES SUCCESSFULLY

On the afternoon of Friday, May 15th, 2009, the 37th Prelacy Representatives Assembly convened at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of clergy members, Central Executive Council members Mr. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, Religious and Executive Council members, delegates, Boards of Trustees Chairmen, Board of Regents members, and Prelacy Schools’ principals and directors. This year’s Assembly was hosted by the Board of Trustees of St. Gregory Church of San Francisco.

The Assembly officially convened with the invocation by the Prelate, after which he invited Very Rev. Fr. Barthev Gulumian to read the message of H.H. Catholicos Aram I. In his message, His Holiness had stated that he continues to follow the activities of the Prelacy closely and asserted his confidence that the work will continue with the same devotion and invaluable input of the delegates. His Holiness also expressed hope for the youth to become more involved in our church through the encouragement of our elders. The message concluded with His Holiness commending the dedicated service of the Prelate, councils, and delegates.

Following the election of the provisional divan, welcoming remarks were delivered by Mr. Khajag Dikijian. Mr. Dikijian welcomed the delegates and particularly the newly elected member of the Central Executive Council Mr. Yacoubian. In addition, Mr. Dikijian spoke of the role of the Assembly and the delegates in the spiritual development of our youth.

Welcoming remarks were also delivered by Executive Council Chairman Dr. Garo Agopian and pastor of the host parish Rev. Fr. Avedis Torossian.

The Prelate was then invited to deliver his message. The Prelate first and foremost gave thanks to His Holiness for his constant care and guidance. The Prelate noted that the proclamation of 2008 as the Year of Christian Education by His Holiness impelled our Christian Education activities and those of our parishes, and in that same manner, this year our focus is on the youth. Thus, we will pay special attention to the needs of our youth and work to have them as active members and contributors to our community life. The Prelate reported that we have already witnessed the potential of our youth as they have

joined the Boards of Trustees of our parishes and we now have a choir made up entirely of youth which will have its first concert in the near future. The Prelate then went over some of the highlights of the past year such as the celebration of the 35th anniversary of the Prelacy and the establishment of a new parish in North Hollywood. The Prelate also reflected on how the Prelacy has become the spiritual home for our community and meeting place for our youth and is the site of various seminars, conferences, and gatherings, and in conclusion wished success to the proceedings of the Assembly.

The election of the permanent divan followed with Mr. Nazareth Sadorian and Mr. Hamo Kasbarian elected as the Chairmen, and Mr. Herair Jermakian and Mr. Lecon Arabian as Secretaries. Mr. Haigaz Terterian, Mr. Jora Manoucherian, and Dr. Hagop Der Megerdichian were elected to the Resolution Committee.

Before the chairmen of the parishes' Boards of Trustees were invited to report on the activities of their respective parishes, Mr. Haigaz Terterian was invited to give a brief elaboration on the Armenian National Constitution. Subsequently, each parish representative on parish was called to the podium to report to the Assembly on their undertakings over the past year and future projects.

Prior to the start of the second session, the Prelate reminded the delegates of the tradition that has been taking place for the past few years to honor a devoted servant of our Prelacy during the Assembly. This year's honoree was Seminary alumnus, former teacher, Board of Trustee member, and Deacon Mr. Zohrab Yaralian. The Prelate, along with the Chairmen of the Religious and Executive Councils, invited Mr. Yaralian to the podium and presented him with a memento in recognition and appreciation of his decades-long service. Mr. Yaralian thanked the Prelate and reaffirmed his commitment and dedication to serving our faith and our church.

During the second session, briefings by the Religious and Executive Councils and Board of Regents took place. A discussion on the past year's endeavors followed, as well as a question and answer session. The Assembly found the activities of the Prelate, Councils, and committees serving under the Prelacy "highly commendable".

The Assembly reconvened on the morning of Saturday, May 16th. During the two sessions, proposals were offered by the delegates regarding the future activities of the Religious and Executive Councils and the Board of Regents, with emphasis put on strengthening our schools, our families, and the youth in general.

The Assembly concluded in the afternoon with closing remarks and the benediction by the Prelate. The Prelate commended the participation of the delegates and their input. He stressed the importance of continued collaboration for the realization of our mission, expressing hope that the endeavors of the coming term will be actualized through joint efforts and with the same dedication and diligence.

The Assembly officially closed with the singing of the Cilician and Armenian national anthems.

Next year's Assembly will take place at Holy Trinity Church in Fresno.